ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 2 » հոկտեմբերի 2024 թվականի N: 462 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N:117-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N:1550-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության» 19-րդ կետի 16-րդ ենթակետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրագործման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալներին հանձնարարել համակարգել հետևյալ բնագավառները, գործառույթները և դրանք ապահովող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանին վերապահել համակարգելու՝

1) քաղաքաշինության, տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության միջոցով,

2) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության միջոցով,

3) հողօգտագործման բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության միջոցով,

4) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառը, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Աննա Մարտիկյանին վերապահել համակարգելու՝

1) մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության միջոցով,

2) սոցիալական պաշտպանության բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության միջոցով,

3) տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվող իրավական հսկողության աշխատանքները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության միջոցով,

4) տնտեսության զարգացման բնագավառը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի միջոցով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2023 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալների կողմից բնագավառներ համակարգելու մասին» N:117-Ա որոշումը:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝